

կական առաքինութիւնը յարգել ու մեծարել:

Այս, որչափ և ինչպէս ճիշտ են մարդիկ ու հաւատարիմ իրանց վայելչութիւնների հտեւից ընկնելու, իրանց կրքերին հետեւելու կողմանէ, բաղդաւորութեան հասնելու համար իրանց կազմած ծրագրերի կողմանէ, իրանց ատելութեան, իրանց զայրացկոտութեան, իրանց նախանձ ունենալու կողմանէ, այստեղ է, որ մեր սիրտն աւելի հեռու և աւելի առաջ է գնում, քան թէ առաքին պաշտօնը կատարելու մէջ: Մարդիկ ճիշտ ու անխարդախ չեն միայն կրօնի կողմանէ. այսինքն է՝ աշխարհիս երեւոյթն են ճշմարիտ և իրական համարում, եւ իսկպէս սիրում. իսկ աստուածային օրինաց ճշմարտութիւնն ու նորա խոստման իսկութիւնը միայն սիրել ձեւացնում:

(Մատիւն)

Թարգմ. Գ. Ե. Ա.

Արարատի ներկայ ամի Ապրիլ ամսատետրի մէջ հրատարակուեցաւ նուիրակութեան նշանակութեան մասին, թէ որքան նա նպաստում էր սերտ յարաբերութիւն պահպանելուն Հայ ժողովրդի եան և Մայր Աթոռի մէջ, երկուստեք միմեանց հոգեւոր և մարմնաւոր պիտոյքները հոգալու դիւրութեան: Նուիրակութեան խնդիրն ու նշանակութիւնը աւելի պարզելու համար, ահա հրատարակում ենք այն հրահանգներն, որոնք սովորաբար տրվում էին նուիրակներին: Այս հրահանգը կազմած է Վեհափառ հրամանաւ երջանջանկայիշատակ Եփրեմ Կաթողիկոսի բարեկարգութեանց կառավարիչ Բարձրագոյն Խորհրդարանի Ա. ժողովն Սուրբ Աթոռի. 1811 թուականին:

ՅԱՂԱԳՍ ՆՈՒՐԱԿԱՅ ՍՐԲՈՅ ԿԱԹՈՒՂԻԿԷ ԷԶՄԻԱՆՆԻ.

Վեհափառ հրամանաւ՝ և բարեհաճութեամբ Յեառն Եփրեմայ Սրբանակատար Կաթողիկոսի և մեծ Քահանայապետի ամենայն Հայոց շարակարգեալ ցուցակ պաշտօնի և պատուիրանաց յանձնեցելոց նուիրակին յառաքելն զնա ի վիճակ.

Ի բարեկարգութեան կառավարիչ սուրբ ժողովոյն բարձրագոյն խորհրդարանի:

Պաշտօն նուիրակաց Սիօնի սրբոյ Կաթողիկէ Էջմիածին Գերագահ Մայր Աթոռոյ ազանց Հայաստանեայց նախկին և տիրազոյն է ըստ օրինակի աշակերտացն Յեառն Աստուածահաճոյ դիտաւորութեամբ գնալ ի վիճակն ինքեան յանձնեցեալ։ Ընել այցելու առ ժողովրդեան Հայոց եղելոց ի սահմանս վիճակի նուիրակութեանն գրեցելոց ի Քահանայապետական կոնգակին, ընթեռնուլ յակոնջս ամենեցուն նոցա զկոնգակ քահանայապետական բազմարդիւն ողջունի և օրհնութեան, և համաձայն Աւետարանական վարդապետութեան Յիսուսի Քրիստոսի Յեառն մերոյ՝ քարոզել ժողովրդեան եկեղեցւոյ Հայաստանեայց և ուսուցանել նոցա պահել հաստատուն զամենայն զոր ինչ պատուիրանն է Աստուածային՝ և օրէնք և կանոնք են լուսաւորչացն ազգի Հայոց՝ ըստ հեղինակութեան ուղղափառ քարոզութեան առաքելն իւրեանց մեծ Քահանայապետին եկեղեցւոյ Քրիստոսի յաջորդի և աթոռակալի Սրբոյն Գրիգորի նախաքահանայապետի և լուսաւորչի՝ և որոց ընդ նովաւ կառավարչացն բարեկարգութեան, Արքեպիսկոպոսաց, Եպիսկոպոսաց, և վարդապետաց սուրբ ժողովոյն բարձրագոյն խորհրդարանի։ Այլ և՛ յիշեցուցանել նոցա զհոգեկեցոյց և զփրկաւէտ բան մխիթարութեան սուրբ Գրոց՝ յաղագս ամենայն վշտաց և նեղութեանց կրելոց և կրելեաց ի փառս պաշտելի ամենասուրբ անուանն Քրիստոսի Աստուծոյ մերոյ, և յաղագս հաստատութեան հաւատոյ՝ յուսոյ և սիրոյ նոցին առ Աստուած մշտնջենական կատարելաւորն համբերութեամբ, ևս և՛ յաղագս յաւիտենից կենացն արժանաւոր քրիստոնէավայելուչ գործոց բարութեան, այն զի՝ հրաման է Աստուածային՝ որպէս և գոչից ւցանէ մարգարէն, մխիթարեցէք մխիթարեցէք զժողովուրդ իմ, ասէ Աստուած։ (Ես. գլ. Խ. հմբ. 1)։

Երկրորդ՝ թեպէտև յատկացեալ պաշտօն առաջնորդաց է, բայց զի փոխանակ քահանայապետի են նուիրակունք, որպէս և գրեցեալն է ի կոնգակն յանձնեցեալ ինքեանց, փոխանորդական պաշտօն է նոցա, խոհմ և զգօն աշաւուրջ շրջահայեցողութեամբ փոյթ ունիլ և տեղեկանալ վասն մեծի և փոքու, հարստաց և աղքատաց, հոգևորականաց և մարմնաւորականաց հօտին յանձնելոյ հովուապետի իւրեանց, Ամենապատուական արեամբն Քրիստոսի Աստուծոյ գնեալ պատուելի երամոց սուրբ լուսաւորչին, և որ ոք յայնցանէ գուցէ խոտորեալ յուղիղ պողոտայէ քրիստոնէութեան, մանաւանդ ևս որոյ գահալիժեալ իցէ միտքն, և ըմբռնեալ յորոգալթս չարին թելադրութեան, երկմտութեան, թերահաւատութեան, անյուսութեան, և ազգի ազգի յաւիտենից կենաց մարդկան մահաուիթ ախտից, ջանալ, հնարել, և որքան իցէ հոսումն կարողութեան հոգւոյ իւրեանց և մարմնոյ՝ իբրև հայր և իբրև եղբայր հարազատ կարեկցութեամբ և մաքուր վշտակցութեամբ գուն գործել՝ հաստատել զայնպիսիսն՝ և ի բաց կտրել զնոսին ի հաղբից չարին՝ որով և իցէ կարելի եղանակաւ, և անել զնոսա ի խոստովանութիւն և յապաշխարութիւն, և ի շաւիղս բարեպաշտ քրիստոնէութեան։ Եւ որպէս զի այս ամենայն հնարք չարին յարմատոյ խլեալ պակպ-

օեսցին, պաշտօն է նոցա առաւելագէս ևս զփոյթ ունիլ և տեղեկանալ վասն քահանայից՝ թէ արթունք և զգաստք իցեն ի վերայ խոստովանութեան և հաղորդութեան ժողովրդոց իւրեանց՝ եթէ անփոյթք առ նոյնս, քանզի բազումք են ի ժողովրդոց՝ որք կամ առ տգիտութեան, կամ առ թերամտութեան և կամ առ ամեմալի խղճի իրիք՝ տկարացեալք՝ ի բաց կան ի խոստովանութենէ և ի կենսաւէտ հաղորդութենէ տարեւոր ժամանակօք, և քահանայից ևս չունելոյ զփոյթ՝ կամ բնաւ ոչ տեղեկանան, և կամ տեղեկանան և անհոգ լինին. և այնպէս ոչխոր հօտին Քրիստոսի ըմբռնեալ ի ժանիս չարին՝ մեռանի ի մեղս իւր. և պարտաւորութիւն արեան նորա մնայ ի վերայ քահանայի, և ի վերայ առաջնորդի նորին, և տիրապէս ևս ի վերայ նախագահ առաջնորդի և գերամարձ աստուածապատիւ գլխոյն եկեղեցւոյ հայաստանեայց. որ է հովուապետ՝ և դէտ՝ և առաջնորդ հաւատոյ սուրբ լուսաւորչեալ՝ հաւատացելոց, Իսկ ապա՝ զի անգատապարտ լիցի յաղագս անպիսեաց առաքելն նուիրակաց հովուապետն ընդհանրական, ամենազգաստ արթնութեամբ և բարւոք քաղաքավարութեամբ պարտ է նոցա ունիլ զհոգ մեծ՝ առ դարձումն մոլորելոց, և առ գիւտ կորուսելոց՝ ի վիճակի նուիրակութեանն յանձնեցելոյ ինքեանց, Համանգամայն ևս պարտ է նուիրակաց փոյթ մեծ ունիլ առ յորդորելոյ՝ զի քահանայք ի վերայ ժողովրդոց իւրեանց՝ և առաջնորդք ի վերայ քահանայից և ժողովրդոց իւրեանց լինիցին յարահակոյք, արթունք և զգաստք առ բարւոք կառավարութիւն ժողովրդեան իւրեանց ըստ հաճոյից կամաց երկնաւոր հօտապետին՝ որ պահանջէ յամենեցունց իւրոց ծառայից զհամարս անտեսութեանց, և զշահ՝ տուեալ քանքարացն. և հատուցանէ իւրաքանչիւրումբ ըստ գործոց իւրեանց, Առ որ բարձրաբարբառ պատուէր փոշեն և հնչեցուցանին իշխանք եկեղեցւոյ սրբոյ, Արածեցէք որ ի ձեզ հօտդ է Աստուծոյ՝ վերակացու լինիլ մի՛ իբրեւ ակամայ, այլ կամաւ ըստ Աստուծոյ, մի՛ զօշաքաղութեամբ, այլ յօժարութեամբ. Ա. Պետ. գլ. Ե, հմբ. 2, Ձգոյշ լինիք ձօտին՝ որում՝ եղ զձեզ Հոգին սուրբ տեսուչս. Գործ. Ի. 28, Բայց առ այս ամենայն հարկ է նուիրակաց նպատակ մտաց իւրեանց ունիլ գրեալքն երանաւէտք, իմաստութեամբ գնասլիք առ արտաքինն, Վոյ. գլ. Դ, հմբ. 5, Քանզի խորագետ էի՝ խելօք կալայ զձեզ. Բ. Վոր. ԺԲ. 16, Սաստեա՛, յանդիմանեա՛, և դարձեալ մխիթարեա՛, Բ. Տիմ. Դ, 2, Եւ երանելի լինին՝ յորժամ հանձարեղ քաղաքավարութեամբ, և ազգաշահ մարդափրութեամբ արդիւնաւորեսցեն զայս երկնահանդէս պաշտօն, որպէս և գրեալն է. Գիտացէ՛, զի որ դարձուցէ զմեղաւորն ի մոլորութեան ճանապարհէ իւրմէ՛, փրկեսցէ զհոգի իւր ի մահուանէ, և ծածկեսցէ զբազմութիւն մեղաց, Յակ. գլ. Ե, հմբ. 20, Եւ առաւել քան զսոյն ասեմ՝ ձեզ՝ զի ուրախութիւն եղիցի յերկինս վասն միոյ մեղաւորի որ ապաշխարիցէ. Ղուկ. ԺԵ, 10:

Երրորդ՝ պաշտօն նուիրակաց է՝ պատմել ամենեցուն որք հարցանենն ծնողաւորաբար զողջունէ և զշինութենէ Մօրն լուսոյ Սրբոյ կաթուղիկէ

Էջմիածնի, և ծանուցանել զխաղաղութենէ, զփառաւորութենէ և զպայծառազարդութենէ նորին շնորհօք սուրբ փեսային իւրոյ երկնաւորի՝ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի։ այլ և բաշխել երկանց սուրբ ծննդեան նորա զմեռոնն սրբալոյս՝ որ է իմանալի ամենամաքուր կաթն ստեանց երկնաւոր և անախտ ծնողութեանն իւրոյ. պարգև մայրենի իւրոց զաւակաց։

Չորրորդ՝ պաշտօն նուիրակաց է՝ ընդունիլ շնորհակալութեամբ և օրհնութեամբ զնուէրս և զընծայս, զորս ջերմեռանդութեամբ սիրոյ որդիութեան իւրեանց, յանուն լուսածին ծնողի իւրեանց սրբոյ Վաթուղիկէ Էջմիածնի, կամ ի վայելս անձին իւր իսկ նուիրակին, նուիրել ունիցին ի ձեռս իւրեանց հարուստք և աղքատք՝ ծնունդք հարազատ սրբոյ Վաթուղիկէ Էջմիածնի, ծնողասէր և Աստուածասէր ազգն մեր Հայոց։

Հինգերորդ՝ պաշտօն նուիրակաց է՝ զնուէրս և զընծայս՝ նուիրեալս ի լուսածնունդ զաւակաց սրբոյ Վաթուղիկէ Էջմիածնի ընկալնուլ և պաշտպանել ամենազգոյշ կառավարութեամբ. և համաձայն գիտաւորութեան և յուսոյ նուիրողաց՝ անկորուստ հասուցանել ի սուրբ Աթոռն։

Վեցերորդ՝ պաշտօն նուիրակաց՝ և մանաւանդ թէ հանդիսարան ամենայն պաշտօնից նոցին է՝ ճանաչել զինքեանս և ճանաչել զժողովուրդն՝ որոց ենն ինքեանք նուիրակ. և այնպէս ծանուցեալ զժողովուրդն՝ ժողովուրդահաւորին Աստուծոյ, և ածեալ զմտաւ զգրեալսն, իբրև զի գեղեցիկք են ոտք աւետարանչաց համբաւոյն խաղաղութեան, իբրև աւետարանչի բարութեանց. Ես գլ. ԾԲ, հմբ. 7. Եւ որ հանէ զպատուականն յանարդէն, բերան իմ՝ կոչեսցի. Երեմ. 15, 19, Ըստ այնմ ապա բարեպաշտ երկիւղածութեամբ կշռել զարժանն ամենայն պարտաւորութեանց պաշտօնի իւրեանց, և վասն ամենայն հարկաւորացն՝ առնել զայնպիսի տնօրէնութիւն, զի զամենայն պատուական մինչ իսպառ ի բաց հեռացուցեալ յանարգութեանց, կացուցեն վայելուչ տեսարան միսթարութեան և ուրախութեան բազմավիշտ ժողովրդեան Տեառն զգեղեցկութիւն ոտից իւրեանց՝ գիտացեալ՝ զի աւետարանիչ խաղաղութեան համբաւոյ՝ և աւետարանիչ բարութեանց են ինքեանք առաքեալք անմիջապէս ի քահանայապետէ ժողովրդեանն այնորիկ, և միջապէս յԱստուծոյ՝ որ արժանացոյցն զինքեանս այնմիկ կարգի և աստիճանի և պաշտօնի. Եւ որպէս զի առ սոյն մեծահանդէս և կրկնաշահ գեղեցիկ վախճան ամենայն գործք իւրեանց յաջողեալք լինիցին, հարկ է նուիրակաց ի բաց քերել յանձնէ զհպարտութիւն, զբարկութիւն, զխրատութիւն բարուց, զճոխանալն տիրաբար, զատեցութիւն հոգեւորականաց կամ մարմնաւորականաց առանց արժանապէս դատողութեան և ստուգութեան ատելի գործոց նոցին, և զմայրն ամենայն չարեաց՝ զհեղձուցիչն բնաւից շնորհաց՝ և զհակառակորդն Աստուածայնոց զսէր և զփոյթ զօշաբաղութեան, այս է անիրաւ շահասիրութիւն, որով վաճառեալք լինին բազմիցս ամենայն բարիք աստուածեղէնք և մարդկեղէնք, որպիսի են պարծանք պանծալի օրինաց և կեղեցւոյ Քրիստոսի, և համբաւք բարութեանց՝ նոցին կառավարչաց սրբազնագործ դասուց հոգեւորականաց, և որ առաւել

ողբալին է, իմանալիքն իսկ՝ բարութիւնը կենացն յաւիտենից, առ որ անհարկն վշտաց Աստուածութեանն կարող է առնուլ զչափ ունկնդիրն Աստուածային պատգամացն։ Ո՛հ, հովիւք որք զանձինս արածէք և ոչ զխաշինս, Եզեկ. ԻԴ, 2, Ապաքէն՝ որպէս զի յայտնեացեն նուիրակունք զինքեանս և զառաքիչն իւրեանց խաշնարածս, և ոչ զանձնարածս և պորտաբոյծս, հարկ է նոցա զամենայն զօրութիւն կամաց և խորհրդոց, բանից և գործոց իւրեանց՝ տարածանել պարզ և անարատ գիտաւորութեամբ վասն սրբութեան օրինաց, պայծառութեան եկեղեցեաց, և օգտի հոգւոց և մարմնոց ժողովրդեան վիճակի իւրեանց. և զամենայն զճիգն իւրեանց յայն բովանդակել, զի լինիցին սերմանացան սիրոյ ժողովրդեան առ միմեանս, առ ի թ խաղաղութեան և բարեսիրտ լինելոյ ամենեցուն առ իրեարս, առաջնորդ մտաց իւրաքանչիւրոց առ բարին հասարակաց, և յորդորիչ կամաց և յօժարութեան մեծաց և փոքունց ի փոյթ հաստատութեան հաւատոյ, պայծառութեան եկեղեցեաց, բարեկարգութեան ազգի, և մեծութեան փառաց ամենասուրբ Անուան մեծին Աստուծոյ, և պաշտելի գլխոյն ընդհանուր եկեղեցւոյ իւրոյ սրբոյ, որով և համարձակաբարբառ եղեալ՝ կարող լինիք առաջի Աստուծոյ և առաջի Աստուածարեալ քահանայապետին իւրեանց՝ պանծացուցանել զպարծանս իւրեանց և ասել արժանապէս, թէ զոր պարտն էաք առնել, արարաք, Ղուկ. ԺԷ, 10:

Ընդ այսոցիկ նշանակեալ պաշտօնից՝ պատուիրանք ևս այսոցիկ են յառկացեալք վասն նուիրակաց սրբոյ Սիօնի Գերագահ Մայր Աթոռոյ ազանց հայաստանեայց, զորս լաւագոյն զգուշութեամբ պարտին պահպանել ամենայն նուիրակունք:

Նախկին և առաջին պատուիրան նուիրակաց է՝ զի ըստ որում փոխանակ քահանայապետի են. որպէս և գրեալն է ի կոնդակն նուիրական, զորօրինակ ինքեանք ի ներկայութեան քահանայապետին ունին պահպանել զպատիւ նորին՝ և զգուշանալ անձանց իւրեանց և ամենայն զգայաբանաց՝ զի մի անվայելչութիւն իմն յառաջ եկեսցէ յինքեանց ընդդէմ՝ արժանաւոր պատուոյ քահանայապետական բարձրութեան, այնպէս պարտին զնոյն զգուշութիւն ունիլ մշտնջենապէս մի և նոյն կերպիւ առ ի պահպանել զպատիւ անձանց իւրեանց՝ ճանաչելով զնոյն անձն իւրեանց՝ և անձն փոխանակ քահանայապետի՝ արժանաւոր այնմիկ յարգութեան, զորոյ զյարգն ամենազգոյշ համեստութեամբ պատուեն և մեծարեն ինքեանք ի նորին պատկառելի ներկայութեան։ Առ որ պարտին զգոյշ լինիլ բերանոյ իւրեանց մի և մի՝ երբէք արտասանել զբան անիծից և նշովից, կամ զբան անարգ և տգեղ, որպիսի են հայհոյութիւնք, ամօթալի բարբառք, անարգական անուանք անուանմունք, ի վերայ մեծի կամ փոքու՝ հարստի կամ աղքատի, բամբասանք զմիւսոյն ընդ միւսոյ, և զայլս ատելիս և անախորժելիս Աստուծոյ և արանց իմաստնոց՝ որք արգելեալքն են ի գրոց սրբոց, Ամենայն բան տգեղ մի՛ ելցէ ի բերանոյ ձերմէ. Եփես. Դ, 29: Ի նմին բերանոյ ելանեն օրհնութիւնք և անէծք, ոչ է պարտ եղբարք իմ այսմ այսպէս լինիլ, Յակ.

գլ. Գ, հմր. 10, Եթէ որ ասիցէ ցեղապար իւր յիմար, պարտաւոր լինի գեհնի. Մատ. գլ. Ե, հմր. 22, Որ կամիցի զկեանս սիրել, և տեսանել զաւուրս բարութեան, լռեցուցէ զլեզու իւր ի չարութենէ, և զշրթունս իւր ի չխօսելոյ զնենգութիւն. Սաղ. 1Գ, 14, Ըռաւել ևս պարտին զգուշանալ լսելեաց իւրեանց, մի և մի երբէք լինիլ վաղվաղկոտ ի հաւատալ ումեք անընտրողաբար, քանդի ի սկզբանէ հետէ անթիւք են վտանգեալքն աստուտ. և այն իսկ է պատճառ ընդ մահու դատապարտութեամբ անկանելոյ նախահարցն. առ որ և բան իմաստնոյն վճիռ անսխալ հրատարակալ է. Որ վաղվաղկոտ է ի հաւատալ, թիթեալսիրտ է. և փոքրկասցի, Սիր. գլ. ԺԹ, հմր. 4, Եւ բարբառն առաքելական գոչէ բարձրաձայն, Սիրելիք՝ մի ամենայն հոգւոյ հաւատայք, այլ ընտրեցէք զհոգիսն եթէ յԱստուծոյ իցեն, Ա. Յօհ. գլ. Դ, հմր. 1, Ընդ այսոցիկ պարտին նուիրակուէք ունիլ զմեծ զգուշութիւն հանդերձ երկիւղիւ մեծաւ, ոչ մտանել յուռկան արեւ. ցութեան երբէք, ոչ իւրեանց յօժարութեամբ, ոչ հարկադրութեամբ երեւելեաց կամ իշխանաց, և ոչ յորդորանօք և սիրոյ աղերսանօք ծանօթից կամ սիրելեաց. քանդի ինքեանք պարտաւորիալ ի պաշտօնի դիտողութեան ի վերայ բազմութեան ժողովրդեանն Աստուծոյ, ծանր նախապէք են՝ յորժամ բազմութիւնք կամ սակաւք ի ժողովրդոց դիտեսցեն ի վերայ ինքեանց յարեցութեան իւրեանց. Թո՛ղ զայն՝ որ յԱստուծոյն է լինելոց վրէժիւնդրութիւն, Եւ յաղագս այսորիկ հարկ է աւնուլ ի բերան զայս պատուիրան իմաստնոյն. Ջսիրիլին քո մի բռնադատեր ի գինւոջ. Սիր. գլ. ԼԱ, հմր. 30, Եւ ունիլ միշտ ի մտի զառաքելականն բան, մի արբենայք գինւով յորում վեղիւթիւն է. Եփես. գլ. Ե, հմր. 18,

Երկրորդ՝ Թէպէտ և առաջին պաշտօն իսկ է կոչման իւրեանց, սակայն պատուիրան է նուիրակաց դարձեալ՝ հանապազորդել և կանխել անխափան յեկեղեցի յիւրաքանչիւր ժամանակաւ աղօթից ի տուէ և ի գիշերի՝ յաւուրս պահոց և ուտեաց՝ ի քաղաքս և ի գիւղս ուր և լինելոց իցեն, և ոչ բնաւ դանդաղիլ և ծուլանալ երբէք, Բանդի եթէ ինքեանք քարոզ ժողովրդեան՝ դանդաղեսցին յանդիման լինիլ Աստուծոյ, և յայտնեսցեն ժողովրդոց զպակասութիւն ջերմեռանդութեան իւրեանց առ յընթանալ յեկեղեցի և հանապազորդել ի տուն Աստուծոյ, այն իսկ պատճառ լինի բեւեռել զագիտութիւն ժողովրդեան ի վերայ գայթակղութեան մտաց իւրեանց, Ուստի զի մի գայթակղութիւն իմն ի վերայ անջերմեռանդութեան կամ ծուլութեան նուիրակաց յառաջ եկեսցէ ի ժողովրդեան, հարկ է նոցա ի բաց մոռանալ զամենայն զկարիս մարմնոյ, և առ օգտի հասարակութեան մնալ անխափան ի սուրբ եկեղեցւոյ, և քարոզել զնոյն ամենայն ժողովրդեան՝ ըստ օրինակի Ցեռան՝ որ առնէր և ուսուցանէր,

Երրորդ՝ պատուիրան է նուիրակաց՝ զի հայեցողութիւն մտաց իւրեանց լինիցի միշտ դէպ առ սուրբ Աթոռն ուստի առաքեցեալն են, եթէ հոգեպէս և թէ մարմնապէս, հոգեպէս՝ զի ուր և իցենն ի խորհուրդս, ի բանս և ի գործս իւրեանց՝ յանդիման մտաց ունիցին զԱթոռն և զմիաբանութիւն, և

սէր իւրեանց եղիցի տարածեալ ի վերայ նոցին անմեկնելի և անձնական յիշտ, Իսկ մարմնապէս՝ զի թէպէտ և ժամանակ շրջագայելոյ նուիրակաց ի վիճակի իւրեանց պայմանեալ է լինիլ երեք ամ, բայց ըստ չափու քանակութեան վիճակի իւրեանց՝ արժան է, զի նուիրակունք ինքեանք փոյթ կալցին արժանապէս տնօրինել զչափ ժամանակի կատարման պաշտօնի իւրեանց, և դռնալ յետ ըստ օրինակի նոյեան աղանդոյն ի տապան Աստուծային Կաթողիկէ Էջմիածին, որով կրկին շնորհ բարութեան հոգւոյ իւրեանց փայլեալ հանդիսացուցանեն, մի՛ զի ո՛չ ծանրանան ի վերայ աղքատաց ժողովրդեան աւելորդ ժամանակաւ և միւս՝ զի սէր իւրեանց առ Աթոռն և առ եղբայրութիւնն յայտնեալ գործովք ապացուցանեն:

Չորրորդ՝ պատուիրան է նուիրակաց՝ ո՛չ սիրել զչափազանցութիւն ի կարիս պաշտօնատարութեան, այլ կռնել զարժանն. այն զի հոգեւորականք եմք, և ամենայն ծանրութիւնք մեր, և սրբոյ Աթոռոյ մերում, և պաշտօնէից մերոց, ևս և ամենայն ծանրութիւնք յաղագս թշնամեաց և բարեկամաց Աթոռոյն և մերումն հոգեւորականութեան, զիզեալ կան ի վերայ ծանրաբեռնեալ թիկանց ողորմելի աղքատ ազգի մերոյ, Յաւագոս որոյ՝ պարտական եմք առհասարակ՝ որքան հնար է, խնամ ունիլ, և առ ամենայն եղելութիւնս ջանալ ո՛չ ծանրանալ բազմափշտ ազգի մերում տարապայման աւելորդապաշտութեամբ, Ուստի ըստ որում Արք Եպիսկոպոս կամ վարդապետ և նուիրակ, ի պատիւ Աթոռոյն և իւրեանց և ազգին՝ բաւականք են մի ժողովրդական պաշտօնեայ, և հոգեւորական՝ քանի և նշանակեալ կայցէ ըստ իւրաքանչիւր վիճակաց՝ ի ցուցակն ինքեանց յատկացեալ, Եւ աւելին քան զայնս՝ հանդէս աւելորդապաշտական, անօգուտ ինքեանց՝ և ազգին, և Աթոռոյն, նա մանաւանդ՝ զի ըստ ջերմեռանդութեան իւրեանց՝ յօժարակամ են ազգ մեր առ հասարակ՝ լինիլ պաշտօնատար ամենայն հոգեւորականաց ի հանդիպմունս հարկաւորաց, և առաւել ևս օգնականք և արբանեակք են նուիրակաց քահանայք և ամենայն եկեղեցականք քաղաքաց և գիւղից:

Հինգերորդ՝ պատուիրան է նուիրակաց՝ պահպանել զչափաւորութիւն ի հանդերձս և ի կերակուրս, ոչ վշտացուցանել զոր յաղագս ուտելեաց, և ոչ խենեք պճնութեամբ կամ անվայելուչ աղտեղի և պատառոտուն զգեստուր իւր և իւրոյնոց՝ տալ զանձն ի բամբասան տկարաց, Յի նա՝ զի ո՛չ որ յամենայն ազգաց գովէ զհոգեւորականն յիւրումն պճնութեան, և ո՛չ զգաստքն և հանձարաւորքն ի մեր ազանց՝ գովեն զնա ի փանաքի գծծութեան, որ առաւելապէս մաքնիսազօր ջատագով է այն սաստիկ ագահութեան կեղծաւորեալ շահասիրաց, քան վկայեալ հանդերձանք առաքինեաց, Այլ որպէս և յայտ է՝ փառք հոգեւորականաց և հանդէս պանծալի՝ կրօնասիրութիւնն է՝ հանդերձ խոնարհութեամբ, պարկեշտութեամբ, զգաստութեամբ, առաքինասիրութեամբ և երկիւղին Աստուծոյ:

Վեցերորդ՝ պատուիրան է նուիրակաց՝ զի վստն ամենայն նուիրաց՝ զորս նուիրել ունիցին աղքատ և տառապեալ ազգ մեր յանուն լուսածին ծնողի

իւրեանց սրբոյ Սաթուղիկէ Էջմիածնի, նպատակ մտաց եղիցի ինքեանց բան խմատնոյն. Կթեա կաթն՝ և եղիցի իւշ, Առակ- Լ, 33, Բայց լաւ ևս գտնանի և արժանաւոր բարութեան համբաւոյ նուիրակին և ազգին և Աթոռոյն թուի մեզ այս եղանակ, զի ընտրութեամբ երեւելաց հասարակութեան եկեղեցւոյն յորում իցեն նուիրակունք՝ տացեն յատկացուցանել առ գործակցութիւն ինքեանց զերկուս բարեմիտ և զխոհական քահանայս, և զերկուս նոյնպիսի ընտիր ժողովրդականս, որք մտահաս և բաւականք իցեն նկատելոյ զարժանն, ըստ վայելչութեան գերայարգ ամենամաքուր ծնողութեան մօրն լուսոյ սրբոյ Սաթուղիկէ Էջմիածնի, ըստ վայելչութեան որդիութեան և որդիական ջերմեռանդութեան նուիրողաց, և ըստ չափու կարողութեան նոցին. յորս լինին խոտորմունք յառաքինութենէ արդարութեան, երեք ինչ, անձանթութիւն վասն ուղիղ նպատակի նուիրմանցն, ագահութիւն և շռայլութիւն, առաջինն՝ խոտորեցուցիչ նուիրողաց միայն. իսկ յետինքն՝ նուիրողաց և նուիրակաց, Սմին իրի՝ զի անխոտոր և ուղիղ լինիցի կատարումն առաքինական գործոց նուիրակութեան, նոցին յատկացուցեալ անձինքն ում զինչ և արժան համարեցին թէ նուիրեցէ, ինքեանք ևս նուիրակունք զայն ընկալցին հանդերձ շնորհակալութեամբ և օրհնութեամբ՝ եթէ նուիրակութիւն իցէ, եթէ հոգեբաժին, եթէ յիշատակի, և եթէ յայլ անուն նուիրմունք, Բայց եթէ նուիրողն ոչ յօժարեցի ի նուիրել զարժան համարեցեալն ի նոցանէ, յայնժամ ևս ինքեանք նուիրակունք որքան կարող իցեն սիրով օրհնութեամբ և չափաւոր յորդորանօք համոզել և յօժարեցուցանել, այն միայն բաւական համարեցին, և արձակեցեն օրհնութեամբ և շնորհակալութեամբ, և մի՛ բնաւ արժան համարեցին աւելի թախանձանաց, կամ սաստիկ յորդորանաց, զի անպատուութիւն է և բամբասեալ լինի իբրեւ նշանակ ագահութեան, որ անվայելուչ է անուան նուիրակաց և Աթոռոյն, Իսկ անէծք և բարկութիւնք և այլ ծանրալուր գործք նուիրակաց վասն առաւելութեան արդեանց ըստ իւրեանց եղական մտաց հաճութեանց, ամենեւին արգելեալք են և չեն ընդունելիք՝ ոչ ամենապատուելի Գահակալին, և ոչ բարեկարգութեան կառավարիչ սուրբ ժողովոյն բարձրագոյն խորհրդարանի սրբոյ Սաթուղիկէ Էջմիածնի:

Յօթներորդ՝ պատուիրան է նուիրակաց՝ զի բաց ի նուիրականէն զայլ ամենայն տեսակ արդիւնսն՝ թէ հոգեբաժին, թէ կտակ, թէ խոսսմունք, թէ յիշատակի, և թէ յայլ անուն նուիրանք՝ սկսեալ ի տասն փարպէ մինչև ի հազարաւոր դուռուշն՝ աղքատ կամ հարուստ՝ ով զինչ և տացէ ինքեանց՝ գրեցեն ի տումար իւրեանց, և ի լրման գործոց քաղաքին կամ գիւղին ուր ընկալնուլ ունիցին զայնոսիկ նուէրս, առանց զանցառութեան յայտնեացն սրբազնակատար Քահանայապետին կամ սուրբ ժողովոյն մի առ մի զանուն տուողին, զչափ արոցն, յոյր անուն տալն, և զանուն քաղաքին կամ գիւղին, որպէս զի առաքեցի առ նոյն կոնդակ յատուկ շնորհակալութեանց և օրհնութեանց: Այն զի գրեալ է, եթէ արասցես զբարեբարութիւն, գիտեալ որոյ առնեսն. Սիր. գլ. ԹԲ, հմր. 1- և թէ՛ բերան շնորհա-

կայու պարտաւոր առնէ զԱստուած. Բարւոյք է ուրեմն զի ազգ մեր գիտաս-
ցեն թէ որոյ առնեն զշնորհս նուիրանաց ի վաստակոց դառն քրտանց
իւրեանց, և ընկալուչքն ևս շնորհակալութեամբ իւրեանց մի մնացին
մինչ իսպառ ի ներքոյ պարտաւորութեանց նոցին:

Աթորորդ՝ պատուիրան է նուիրակաց՝ զի վասն գանձանակաց, որք չեն
գրեցեալք ի կոնդակի նուիրակութեան իւրեանց մի լինիցին զանցառու իւ-
րե և զի չեն յանձնեցեալ ինքեանց, այլ որպէս վայել է հարազատութեան
հարազատից սրբոյ Աթորոյն և միաբանութեանն, այնպէս ջերմեռանդու-
թեամբ հոգւոյ փոյթ մեծ կայցին առ բարւոյք հոգացողութիւն վասն գան-
ձանակացն: Եւ ուր իցեն գանձանակք սրբոյ Վաթուղիկէ Եջմիածնի՝ լաւա-
գոյն զգուշութեամբ տեղեկացին վասն բարեպաշտութեան և հարազատու-
թեան գանձապետին, և եթէ իցէ վկայեալ անձն արժանաւոր, ընկալցին
զնա արժանաւոր յարգութեամբ իբրեւ զյատկացեալ պաշտօնատար սրբոյ
Աթորոյն, և ծանուցեն գրով վասն հաւատարմութեան նորա: Իսկ եթէ
չիցէ գանձապետն այն վկայեալ յիւրումն բարեպաշտութեան և հարազա-
տութեան, գրեցեն և ծանուցեն ի սուրբ Աթոռն վասն այնպիսի անարժա-
նութեան նորին, ևս և զարժանաւորութենէ հասարակաց հաճելի պատուա-
ւոր անձին ուրուք, ըստ որոյ եղիցի վկայեալէս փոխարկութիւն և խափա-
նումն վնասուց հոգւոյ անհարազատ գանձապետին, և արդեանց սրբոյ Ա-
թորոյն: Նա ևս ուր իցէ արժանաւորութիւն գանձանակի՝ և չգուցէ հաս-
տատեալ յառաջնոց, նոյնպէս ջերմեռանդութեամբ փոյթ կայցին նուիրա-
կունք հաստատել նորոգ, քանզի առաքելական է այն գործ՝ որպէս և գըր-
եալն է. և արժանի է զի ամենայն եկեղեցիք քրիստոնէից ունիցին զգան-
ձանակ և պաշտպանեսցեն զնոյն հաստատուն յոյժ և յոյժ ջերմեռանդու-
թեամբ հոգւոյ: որովհետեւ արկեալն ի գանձանակ փոքր ինչ է, և զօրու-
թիւն նորա՝ և արդիւնքն հոգւոր՝ մեծ յոյժ. մինչև գովեաց զնա արար-
չագործ բերանն Քրիստոսի, և պարծանք տառապեալ պրոյն վասն երկուց
լոմայից՝ կայ և մնայ յաւիտեան, որպէս ահա լսելի լինի յաւատարմու-
թեան անդ. Մար. Գլ. ԺԲ, ԿՅ: Այլ վասն արդեանց գանձանակաց ըստ-
որում նորոգ կարգադրութիւնն ընտրելի համարեցաւ զարդիւնս ամենայն գան-
ձանակաց եղելոց ընդ ամենայն տեղիս՝ ստանալ ամ ըստ ամէ, և ո՛չ նուի-
րակէ ի նուիրակ, առ այն ուրեմ, գործ է նուիրակաց զի որպէս և յանձ-
նեցեալ իցէ ինքեանց յատուկ ցուցակաւ, այնպէս ունիցին զբարւոյք հոգացո-
ղութիւն, զի ամբողջապէս արդիւնք գանձանակաց եկեալ հասցեն ի սուրբ
Աթոռն:

Իններորդ՝ պատուէր նուիրակաց է՝ զի արդեանց՝ որք չիցեն պատկանեալք
սրբոյ Վաթուղիկէ Եջմիածնի, այլ կամ գերահառչ Աթորոյ սրբոյ Յակո-
բեանց՝ որ յերուսաղէմ, կամ այլոց վանօրէից և եկեղեցեաց, և կամ ա-
ռաջնորդաց վիճակին, մի բնաւ յօժարեսցին լինիլ ձեռնամուկ և իւրա-
ցուցանել զայնս, զի որ չէ իւրեանց, չէ ինքեանց կամ իւրեանց եղբարաց ար-
գար և սուրբ կերակուր, և զոր չէ նուիրեալ ինքեանց կամակար յօժարու-

Թեամբ իւրով վաստակաւորն այնորիկ, կամ յափշտակութիւն է, և կամ գողութիւն, որք վնասակարք են ըստ հոգւոյ և ըստ մարմնոյ. և նախատինք յոյժ, որպէս քարոզեն գրեալքն, մեծութիւն անիրաւութեամբ ժողովեալ՝ փոխեցի. Յոր. գլ. Ի. հմբ. 15, Որ քարոզես չգողանալ, գողանաս. որ գարշիս ի մեհնեաց, զսեղանս կողոպտես. Հռոմ. գլ. Բ. հմբ. 21.

Յասներորդ՝ պատուիրան է նուիրակաց Արք Եպիսկոպոսաց և եպիսկոպոսաց, ձեռս վաղվաղակի յուրուք վերայ մի դնել. ո՛չ կուսակրօնի, և ոչ ամուսնացելոյ. նախ՝ զի առաքելական է հրամանն, և ծանր յանցանք է անարժան ձեռնադրութիւն. Եւ երկրորդ՝ զի խանգարումն բարեկարգութեանց եկեղեցւոյ հայաստանեայց, և ցաւ մեծ ի վերայ ցաւալի ազգին մուրում, և աստպատակք անողորմք բազմութիւնք վաղվաղկոտութեամբ ձեռնադրելեացն են, որպէս և յայտ է, զի ընդ ծագս տիեզերաց տարածեալք՝ զանազան դարանակալութեամբ, և կեղծուպատիր հնարիք ծաւրեն, ճարակեն և ծախեն զկեանս ողորմելի ժողովրդեան ազգի հայոց անխիղճ և մուրամիտ վարդապետք և քահանայք՝ արհամարհանք օրինաց սրբութեան եկեղեցւոյ Քրիստոսի, և նախատինք անձանց իւրեանց, և ձեռնադրողացն զինքեանս. Իսկ երրորդ՝ զի ձեռնադրութիւնն յատկացեալ պաշտօն առաջնորդաց վիճակին է, և ո՛չ նուիրակաց, Վասն որոյ զի առաջի Աստուծոյ, և առաջի բազմութեան ժողովրդեան անարատ լիցի և առանց դայթակղութեան պաշտօնատարութիւն նուիրակաց, հարկ է նոցա պահպանել զմեծ զգուշութիւն յաղագս ձեռնադրութեան այնպէս, որպէս աւանդեցեալն է քահանայապետական բարձրահրաման կոնդակաւ նորոգ ձեռնադրեցեալ եպիսկոպոսաց, սկսեալ յամէ 1811, յամենան յունվարի. Եւ ըստ այնմ անկախ իշխանութեամբ ունին նուիրակունք ձեռնադրել միայն զյատկացեալ պաշտօնեայս իւրեանց, որք փորձեալք և հաւատարմք իցին ըստ ամենայն հարկաւոր պարագայից, և կարողք իցեն լինիլ աներկեան յաղագս մնալոյ նոցա անբաժանելի յինքեանց և ի միաբանութենէ սրբոյ Վթուղիկէ Էջմիածնի զամենայն ժամանակս կենաց իւրեանց, Բաց յայնցանէ՝ ոչ է հրաման նուիրակաց անկախ իշխանութեամբ իւրեանց ձեռնադրել զղբ, և ոչ տալ ումեք զաստիճան յառաջնոյն մինչև ցվերջինն առանց կամաց և խնդրոյ առաջնորդի վիճակին, Իսկ և ի լինելն կամաց և խնդրանաց առաջնորդի, կամ ուր չգուցէ առաջնորդ, և եղիցի միջնորդութիւն իշխանաց և Թախանձ բազմութեան ժողովրդոց՝ նոյնպէս ոչ է հրաման ձեռնադրելոյ առանց լաւապէս քննութեան և վերահասութեան ըստ հաւատոյն, ըստ բաւականութեան չափու գիտութեանն, ըստ վարուցն, ըստ կայունութեան բարուցն՝ և ըստ այլ հարկաւոր պարագայիցն. Այլ և զվկայեալսն և զարժանաւորսն որք չիցին յատկացեալ ի վերայ Եթոռոց, վանորէից և եկեղեցեաց քաղաքի կամ գիւղի ուրուք, և կամ փորձեալ և վկայեալ պաշտօնեայք պաշտօնակից եղբարց նուիրակաց հրաշափառ Աթոռոյ սրբոց Յակոբեանց, և դարձեալ եթէ չունիցի զհաւատարմութիւն վասն մնալոյ նոցա մինչև ցվախճան կենաց իւրեանց անփոփոխ ի նոյն տեղւոյ կամ առ նոյն անձն, յուրմ ա-

նուն ձեռնադրեցան, ոչ ձեռնադրեցեն նուիրակք և զայնպիսին՝ եթէ վանական իցէ և եթէ քահանայ աշխարհական: Այլ ձեռնադրեցեն բաշխում զգուշաւոր ընտրութեամբ զվկայեալսն ըստ ամենայն նշանակեալ պարագայիցն: Այլ և ի ձեռնադրելն զայնպիսին, ընկալցին ի նոցանէ զգիր ևրաշխաւորութեամբ միջնորդացն, այնու դաշնադրութեամբ, զի մինչև ցվական մնալ ունիցին առ այնս, յում անուն ձեռնադրեցան և ի լինին անհնարին հարկի բաժանման յուրտեալ տեղւոյն կամ յառնէն դիմացն ուղղակի ի սուրբ Կաթողիկէն Եջմիածին, որ մայրն է լուսաւորչական երամոց, և անդէն պաշտպանեցին զկնանս և զպարկեշտութիւն իւրեանց՝ ըստ արժանի կարգին, եթէ իցեն անձինք կուսակրօնք: Իսկ եթէ լինիցին ամուսնացեալ քահանայք, կարգեցին յայլ պատշաճաւոր տեղի տնօրինմամբ առաջնորդի վիճակին, և մի բնաւ հողմակոծեալք շրջեցին աստանգականք: Ապա եթէ անպանել ունիցին զայնու պայմանաւ և ստեցեն ուրտին իւրեանց, եղիցին արգելեալք ի կարգէ և ի պաշտօնէ քահանայադործութեան իւրեանց, Եւ զայն գիր ի լուր հանդիսի բազմութեան ժողովրդհանն ի մէջ սրբոյ եկեղեցւոյն տայնն ընթեռնուլ խրտուղակին ի սկիզբն կարգի ձեռնադրութեանն, զի յայտնի լիցի ամենայն ազգի մերում ընդ ամենայն աշխարհ սահման իշխանութեան կարգաւորութեան ձեռնադրեացն, Իսկ եթէ անխնամ եղեալ եկեղեցւոյն Աստուծոյ և ժողովրդիան՝ անհոգ լինիցին յաղագս զգուշանալոյ ըստ նշանակեալ կնրպիցս ըստ այսոցիկ, և անխտաբար վարեցին՝ ի ձեռնադրութիւնս, և վատարարոյ ձեռնադրեալք իւրեանց հրատարակեցին անզուսպ ընթացիւք ի տեղւոյ ուրեք, յայնժամ զվրէժս իւրեանցն անարգ ձեռնադրելոց, յանձինս իւրեանց լուծանել պարտաւոր լինին նուիրակունք:

Մետաքաներորդ՝ պատուիրան է նուիրակաց՝ զի առանց խորհրդակից ունելոյ զքահանայս և զիշխանս և զանձինս երեւելիս ի ժողովրդոց՝ զվճիռ դատապարտութեան ի վերայ մեծի կամ փոքու ուրուք մի հասցեն եղակի կամւք, և հաւանութեամբ հաճոյից իւրեանց՝ վասն որպիսի և իցէ յանցանաց, քանզի ոչ է հրաման ի կանոնաց սրբոց, և ոչ ևս այժմ ի կառավարութիւն բարեկարգութեանց, Այլ և ի դատապարտելն համաձայնութեամբ քահանայից և իշխանաց, մի յանդուգն ցասմամբ դատապարտ առնել զյանցաւորն տարապայման դատաստանաւ, զի դատաստան առանց հանդարտութեան մտաց, և առանց բարեխառնութեան կրից, ոչ այնքան արդարացուցանէ զդատաստանն՝ որքան դատապարտ կացուցանէ զդատաւորն, որպէս և գրեալն է. Բարկութիւն մարդոյ զարդարութիւն Աստուծոյ ոչ գործէ, Յակ. գլ. Ա, հմբ. 20: Այլ որպէս արժանն է լուսագոյն ընտրութեամբ, և իմաստուն խորհրդածութեամբ՝ բանիւք հեղութեան համեմալ քաղցրախօսութեամբ, գեղեցկալուր փաստաբանութեամբ այնպէս անուշակ կացուցանել զվճիռ դատաստանաց, զի զոյգ ընդ կրից դառնութեան դատապարտելոյն՝ ներգործեցէ ի նոյն ինքն դատապարտեալն՝ և ևս առաւել յամենայն տեսողսն և լսողսն զբաղցրութիւն իմն հոգեխառն կրից, և պարզ և ուղիղ

վրէժխնդրութեանց նուիրակաց, առ սգտի մեղուցելոյն, և հասարակութեան եկեղեցւոյն, Բոլորապէս ևս յամենայն դատաստանաց նուիրակաց հերքեալ եղիցին լացէ ի լաց՝ անէճք, հայհոյութիւնք, տգեղ բարբառք, և բարկութիւն հանդերձ իւրովք պարագայիւք: Այլ և վասն քահանայից ամբաստանելոց՝ մի լիցի բնաւ յօժարութիւն նուիրակաց առնել խաղալիկ զփիլոնն քահանայութեան, և առնուլ և դարձուցանել վասն գոյզն պատճառաց՝ զի տղայական իմն է պոյն, և անհանձար արարողութիւն. այլ թէ առնուլ արժան իցէ վասն անարժանութեան քահանային, զիարդ կարելի իցէ դարձուցանել անդրէն իսկոյն իրրեւ արժանաւոր այնմիկ, վասնորոյ՝ փիլոն քահանայից բարւոք է զի պատուեացէ զքահանայութիւն քահանային՝ և քարոզեացէ վասն ամօթալի գործոց, և անվայելուչ շարժութեանց նորին ի ներկայացուցանելն զնա տեսութեան հասարակաց ի մէջ պատշաճեալ արժանաւոր ապաշխարութեան իւրում, արտաքոյ եկեղեցւոյն կամ ի ներքս:

Երկոտասաներորդ՝ պատուիրան է նուիրակաց՝ սրբոյ Վաթուղիկէ Եջմիածնի, և մանաւանդ թէ վերոյիշատակութեան քրիստոսական պատուիրանաց, զի ունիցին զպարզ և ճշմարիտ սէր հանդերձ արժանաւոր յարգութեամբ առ առաջնորդս իւրաքանչիւր վիճակաց, և առ նուիրակունս գերապանծ Աթոռոյ սրբոյ Յակոբեանց որ յԵրուսաղէմ, և յամենայն բարի պաշտօնատարութիւնս նոցին՝ եղիցին նոցա ջատագովք և աջակիցք, զի պաշտօնակիցք են և սպասաւորք եկեղեցւոյ Քրիստոսի, և եթէ իցէ արատ և ըստգրտանք ի կենցաղավարութիւնս և ի գործս նոցին, հարազատ կարեկցութեամբ փոյթ կալցին համոզել սիրով, և ի լաւ անդր զյօժարութիւն նոցին դարձուցանել որքան հնար է: Ապա եթէ անցցեն նոքա զպայմանաւ սիրելութեան՝ և յամառ լիցին ի վերայ ատելի ախորժակաց և յօժարութեան հաճոյից իւրեանց՝ որ լինելոցն իցէ անվայելուչ կարգի և կոչմանց իւրեանց, եկեղեցւոյ Քրիստոսի, և գայթակղութիւն ժողովրդոց հաւատացելոց, ինքեանք զիւրեանցն լաւութիւն հանդիսացուցեն նուիրակունք գեղեցիկ քաղաքավարութեամբ առ նոսին, և գրեալ յայտնեսցեն զայնցանէ աստուածաբեալ մեծ Քահանայապետին, և երկուց գերայարգ պատրիարգացն, նպատակ մտաց իւրեանց ունելով զգրեալսն: Պատուիրան նոր տամ ձեզ, զի սիրեսջիք զմիմեանս, Յօժ. ԺԴ, հմր. 34, Ի պատիւ զմիմեամբ ելանել. Հռոմ. 44. ԺԲ, հմր. 10, Դու զի դատես զեղբայրն քո. զի իւրում Տեառն կայ կամ անկանի. Հռոմ. 44. ԺԴ, հմր. 10:

Անդրէաս Արք Եպիսկոպոս, Ալէքսան Արք Եպիսկոպոս
Մաշակ Արք Եպիսկոպոս, Յովհաննէս Արք Եպիսկոպոս
Ներսէս Արք Եպիսկոպոս, Եփրեմ վարդապետ,

Գրիգոր վարդապետ.